



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՍՆ ԻՒՂՈՅ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԵԱՆ

Հոս ներկայացուցած պատահիկս անթուական է և գրչի անունն անծանոթ: Կը զտնուի ՈՍԿԵ ԳՈՐԿԻ Գ. Ի մէջ (որուն վրայ տես ինքզնիքդ Հոկտ. Ի էջ 336 իրաւօրութիւն): Վերջաբանու թենէն կը տեսնուի որ սա ճառի մը մեկնութեան մէկ նշխարն է:

ԽՄԻ.

«Արդ իւղոյն. որակութիւնն զանազան է, զի ի կոլմուց և յոյխարաց բաղկանայ: Այլ զայս իւղս աստուածային օրէնքն զրեն թէ հրամանաւն Աստուծոյ գոյացաւ, զի այսպէս ասէ Գիրքն. Աղցես զծաղիկն չորս, զհիւրիկն, զեղէզն, ըզմուռն և զկիւնամոնն, և եփեսցես խակակութ ձիթով: Բայց պարտ է յայտնել զէութիւն չորից ծաղկանցս թէ ուստի է կամ որպիսի գտանի կամ որպէս զօրութիւն ունին զդէս հալածել ի մարդկանէ:

«Արդ հերիկն յեթովպիայ գտանի, յեզր Գիսոն գետոյն, և ունի զօրութիւն զդէս հալածել ի մարդկանէ, և յայս ի


յանդիմանութիւն զիւրին, որ տկար խոտով խորտակի:

«Իսկ եղէզն նորասրանչ և անուշահոտ է, և սա ի սինեա լերինն գտանի, զոր թագաւորը առ ինքեանս պահեն, ոչ վասն անուշահոտութեան միայն, այլ զի զցաւան բժշկէ, մանաւանդ զքօսից և զանկանն:

«Իսկ կինամոնն ծաղիկ է, ի թերայիթ գտանի, սրանչելատես և զարմանալի, զի յորժամ մարդ ոք խորու ի բուն լինի և ի վերայ շրթանցն դնեն՝ զամենայն խորհուրդ սրտին ասէ և ոչ զիտէ, և յորժամ հոանդ ջուրն հասուցանեն, զովացուցանէ:

«Իսկ զմուռն ի բաբելոն կայ. խնկի նման է որ զմարմին թագաւորացն օծանեն, զի անապական մնացէ և զի դառն է իւրեկ զլեղի: Երբժամ ի քացախ արկանեն և մարդոյ տան թմրի, զոր և քրիստոսի արբուցին:

« Յայսքան ծաղկանցս յարդարեալ էր իւրն այն. յաղագս յայսմ յոյժ ազնիւ էր և պատուական. Նովա օծեալ են Ահաբոն և որդիքն իւր ի քահանայութիւն. Նովա Սամուէլ մարգարէն էօծ զՍաուդ և զԴաւիթ ի թագաւորութիւն. Նովա օծին Սաղովկ և Նաթան մարգարէն զՍօդոմոն. Նովա օծ Եղիսէ գծեալ թագաւոր ի վերայ իսրայելի և զԱղայէլ թագաւոր ի վերայ ասորոց. Նովա կրնն պոռնիկ օծ զտոն Գրիստոնի ի տուն Սիմոնի. Նովա և քոյրն Ղազարու Մարիամ օծ զԹիսուս. ընդ որ զայրացեալ Յուդայ ընդ հրաշագոյն իւղոյն և ասէր. Թէ պարտ էր վաճառել երեսուն դահեկանի և տալ աղքատաց. Զայս իւրս կանայքն ևս պատրաստեցին ի թաղումն Տեառն. այսքան վասն իւղոյն մեկնութեանն » :



ԱՒԱՆԴԱՎԷՊ ԱԲԳԱՐՈՒ

ՀՄՈՒՏ սրբախօսներ՝ Հ. Ֆէոնան Գաբրու լի առաջնորդութեամբ ի լոյս կ'ընծայեն 1907 թուականէն սկսեալ Գրիստոնէական Հնախօսութեան և Եկեղեցական պաշտամանց Բառագիրքը Բարիգու մէջ: Առաջին պրակին մէջ՝ էջ 87 մեզ կը հետաքրքրէ Արգարու աւանդավէպը, որուն ծանօթութիւնները զանց ընելով, գրութեան համառօտութիւնը միայն մեր ազնիւ հնասէր ընթերցասիրաց կը փափագինք ծանօթացնել: Գրոյս հեղինակն է Հ. Լըբլէրը. Առաւել հետամուտը կրնան օգտուիլ ևս Վ. Հ. Տաշեանի Զեռագրաց Յուցակագրքէն, Աբգարու, Ղերուբնայի ևն ծանօթութիւնները նայելով:

Հ. Լըբլէրը՝ Աւանդավէպս կը բաժնէ հինգ էջերու. Ա. Գրական պատմութիւնը կ'ընէ. Բ. կը խօսի պտորենակութեանը վրայ. Գ. աւոր ընդլայնումը կ'ընէ. Դ. կը զնէ անոր պատմական արժէքը. Ե.՝ կը վերջացնէ՝ անոր եկեղեցական պաշտամանց մէջ ունեցած դերը պատմելով:

Եւսեբիոս կը պատմէ, աւանդութեանէ առնելով, որ Ոսրոյնաց տեղապետը (փոխարքայն) նամակ կը գրէ իր ժամանակակից Յիսուսի, և երեք յիշատակարաններ կը ներկայացնէ. Ա. Արգարու նամակը առ Յիսուս. Բ. Յիսուսի պատասխանը և Գ. Մինչև մեր օրը հասած կենդանագիրը: Արգարու անծին նկատմամբ մասնաւոր կերպով պիտի խօսուի՝ Եղեմիոյ վրայ գրուած ժամանակ. իրեն նկատմամբ աւանդավէպը մեծ արձագանք ունեցաւ՝ արեւելի և արեւմուտքի մէջ:

Ա. Աւանդավէպիս գրական պատմութիւնը:

Նախ Եւսեբիոս կը պատմէ, որ իր ժամանակը թղթակցութեանցս սկզբնագիրները կը գտնուէին Եղեմիոյ դիւանին մէջ ասորի լեզուով: Քիբլըթոն 1864ին կը գտնէ անկատար բնագիր մը և կը հրատարակէ Բրիտանական թանգարանին մէջ գտնուածին համեմատ, որոնք երկու օրիւ նակներ էին (թիւ. 14654 և 14644), կատարեալ բնագիրը կը գտնուի (գործ Զ. Դարու) Բեզրասպուրիի կայսերական Գրատան մէջ, զոր կը հրատարակէ 1876ին Ֆիլիպս:

Կայ հայ թարգմանութիւն մը հինգերորդ դարուն մէջ եղած, որ հաւատարիմ թարգմանութիւն մ'է՝ բացի վերջին կտորէն, որուն մի մասը նախ գաղղերէնի թարգմանուած և լոյս տեսած է և ապա Ալիշան նոր հրատարակութեամբը ամբողջացուցեր է:

Եւսեբիոս՝ եկեղեցական պատմութեան մէջ կ'ըսէ, թէ ինքը ասորերէն բնագիրէն բառ առ բառ յոյնի դարձուցեր է թղթակցութիւնս: Արդ յոյնը՝ երկու ազատ թարգմանութիւններ ունի, երկուքն ալ աւելի ամփոփ քան ասորականը:

Աւանդավէպիս վրայ կան խօսող՝ հին և նոր հեղինակներ, զլիաւորաբար ասորի, հայ, յոյն, լատին, արաբ, պարսիկ, որոնք կ'արժէ ակնարկ մը տալ հարեանցի կերպով: